

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ
10-րդ դասարան

Միրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:

Հաջողություն՝ և հաղթանակ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1.Ի՞նչ է վիպերգը . ե՞րբ է ձևավորվել: Ո՞րմ շնորհիվ է վիպերգը փրկվել մոռացությունից:

Ո՞վ է Արա Գեղեցիկը. Ունի՞ պատմական նախատիպ: Բնութագրի՛ր Արային ընտանիքում և հայրենիքի համար մղված պայքարում: Վիպերգի արտացոլումը արվեստում (գրականություն, կերպարվեստ): (5 մ)

2.Բնութագրի՛ր նշյալ կին հերոսներից յուրաքանչյուրին՝ ընդգծելով նրանց կերպարների նմանություններն ու տարբերությունները: Նշի՛ր որ վիպերգերի հերոսներն են: (Շամիրամ, Սաթենիկ, Տիգրանուհի) : (5 մ)

3.«Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու,
Քեզ միայն քո յարն է վառել, քանի՛ յարեր վառել ես դու» :
Ո՞րմ մասին է երկտողը, ո՞վ է հեղինակը:

Ո՞րմ է նվիրված՝

«Մեջքըդ սալբու, չինարի պես, ռանգըդ փռանգի ատլաս է,
Լիզուդ շաքար, պոռշրդ դանդ , ակռեքրդ մարքրիտ, ալմաս է,
Օսկու մեջքն մինա արած աչքիրըդ ակնակապ թաս է,
Պատվական, անգին ջավահիր, լալ-բաղեշխան իս ինձ ամա...»

Ի՞նչ փոխաբերություններով է երգիչը բնութագրում հերոսուհուն:

Ի՞նչ շրջասույթներ գիտես հեղինակի մասին: Կա՞ որևէ տոն՝ նվիրված մեծ հանձարին: (5 մ)

4.Ո՞վ է նշված ստեղծագործությունների հեղինակը. «Դավիթ Բեկ», «Խամսայի մեղիքություններ», «Սամվել», «Պարույր Հայկազն»: Գրի՛ր հեղինակի մասին շրջասույթը:

Ի՞նչ ժանրի ստեղծագործություններ են: Ի՞նչ է ասել հեղինակը այս մասին: Մերժի՛ր կամ ընդունի՛ր Սամվելի արարքը քո տեսանկյունից: (5 մ)